## Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Հ-34 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

**ք.Երևան** **<< 08>> 05. 2025թ. ժամը 16:00**

**Օրակարգ՝**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքների** կատարման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Հ-34** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Գ. Մկրտչյանը գնահատման նիստը հայտարարեց բացված:

**1. Տվյալներ հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին.**

Մասնակիցների ներկայացրած հայտերը ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում են բավարար:

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Հ-34 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները տես կից ներկայացված համեմատական աղյուսակում:

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակից ՌԻԳ ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս ֆիքսել են, որ գնային առաջարկի հավելված 2-ի «Չափաբաժինների համարները» սյունյակում մասնակիցը նշել է թիվ 1 չափաբաժինը և հայտի գնային առաջարկը դիտարկվել է որպես թիվ 1 չափաբաժնի համար առաջարկված գին, սակայն կրկնակի դիտարկման արդյունքում նկատվել է, որ գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված և վերաբերում է 3-րդ չափաբաժնին:

Ուստի գնահատող հանձնաժողովը արձանագրություն 4-ով ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Հ-34 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչում նվազագույն գին ներկայացրած «ԱՐՇԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն:

**Հանձնաժողովը որոշեց՝**

«ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Հ-34» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից են ճանաչվում 1,2,3,5,7,8 չափաբաժինների մասով «ԱՐՇԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, 4-րդ չափաբաժնի մասով ՇԻՆ ԱՐՄԱՆ ՍՊԸ-ն, 6-րդ չափաբաժնի մասով Հ.Պողոսյան ՍՊԸ-ն, 9-րդ չափաբաժնի մասով ՄՄԼ ՍՊԸ-ն, 10-րդ չափաբաժնի մասով ՋԻ ԷԼ ԹԻ ՍՊԸ-ն և 11-րդ չափաբաժնի մասով ՍՈՒՆՍ ՍՄԻԼ ՍՊԸ-ն:

Ընտրված մասնակիցներին որոշելու համար կիրառված չափանիշ՝ նվազագույն գին:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո, օրենքով սահմանված ժամկետում ընտրված մասնակիցներին կառաջարկվի կնքել պայմանագիր:

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | Գ. Մկրտչյան |
| *Հանձնաժողովի գնահատող անդամներ՝* | Ք. Ավետիսյան |
| | Ա. Դուրգարյան |
| *Քարտուղար՝* | Հ. Աստրյան |